


1030-9

ՆԻՄԱՆԿ

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԸ



ՊԵՏԼՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928



Ն Ի Մ Ա Ն Գ



2




ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԸ

Հակակրոնական ակնարկ

20100

A 450x



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Զ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ե Ե Ի Ե Վ Ա Ն — 1 9 2 8

Գրանկար № 871բ. հ. 769 Տիրած 2000
Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում.—Պատ. № 937

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՒՆԸ.

I.

ԱՍՏՎԱԾԱԾՆԸ ՍԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱ- ԼԻՔՆԵՐԻ ՍԵՋ.

Ամեն տարի ոգոստոսի կեսերին, մոտավորապես ամսի 10-ից մինչև 17-ն ընկնող կիրակի որը, հայ յեկեղեցին կատարում է այսպես կոչված «վերափոխումն սրբո աստվածածնի» տոնը, վոր մեր ժողովրդի մեջ ավելի տարածված է «աստվածածնա տոն» անունով: Այդ տոնին մեծ նշանակութուն են տալիս մեր գյուղացիները, մանավանդ կանայք: Այդ որը տեղի յեն ունենում բազմաթիվ ուխտազնացություններ, մատաղներ և Մարիամ աստվածածնի անունով հայտնի սրբություններին յերկրպագություններ: Այդ որը որհնում են խաղող, դեղձ, թուզ և այլ հասած պտուղներ: Այդ որը բոլոր ուխտավորներն ու հավատացյալներն անց են կացնում դուրսը բնության մեջ, ուխտատեղիներում և այգիներում ուրախություններ անելով, քեֆ ու խնջույքներ սարքելով և հարբելով:

Մեր ժողովրդի, առավելապես գյուղացիության մեջ՝ Բրիստոսից հետո ամենամեծ ու ամե

նասիրելի սուրբը համարվում է նրա մայրը՝ Մարիամ առսվածածի՝ ր: Վնչ մի սրբի, նույն-
խակ Քրիստոսի համար, այնքան սրբատեղիներ
չկան, այնքան տոներ, ուխտագնացություններ
ու մատաղներ չեն արվում, վորքան Մարիամ
աստվածածնի համար: Հայաստանում չկա քա-
ղաք, մի գյուղ, մի շեն, վորտեղ չլինի Մարիամ
աստվածածնի անվան նվիրած կամ յեկեղեցի,
կամ վանք, կամ մատուռ, կամ մի այլ նման
սրբատեղի:

Այդ բոլոր տեղերում պահվում են սուրբ
համարվող պատկերներ, վորոնք իբր թե Մա-
րիամ աստվածածնի կերպարանքն են ներկայաց-
նում: Այդ պատկերների «գորության» մասին
միամիտ ու տգետ ժողովրդի մեջ զանազան
հնարովի պատմություններ են տարածում, անմիտ
առասպելներ են ստեղծում: Այդ ամենն անում
են նրանք, ովքեր իրենց փեշակ են դարձրել
այդ սրբատեղիների յեկամուտներով ապրել, այն
ե՛ տերտերներ, վարդապետներ, յերեցփոխներ,
զանազան ճրիակեր ու բախտախնդիր մարդիկ,
վորոնք միշտ աչքը տնկած ունեն աշխատավոր
գյուղացու ձեռքին ու գրպանին, վորպեսզի նրա
վերջին կոպեկները պոկեն:

II.

Ի՛նչ է ԱՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԸ ՅԵՎ Ի՛նչ է
ԱՍՈՒՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.

Յեթե հարցնենք տերտերներին, թե ի՛նչ
բան է «վերափոխումն աստվածածնի» տոնը,
նրանք կասեն հետևյալը. այդ տոնն իբր թե
հիշատակություն է այն որվա, յերբ Քրիստոսի
մայրը՝ Մարիամ աստվածածինը, մահացել է ու
վերափոխվել է յերկինք: Քրիստոնեական քարո-
զիչները մտածել եյին՝ յեթե Քրիստոսը վորպես
աստված, իր մահվանից ու հարությունից հետո
համբարձել է յերկինք, շատ անհարմար կլիներ,
վոր նրա մայրը, մահանալով, մնար յերկրում:
Չե՞ վոր այն ժամանակ հարկավոր եր ցույց
տալ նրա թաղման տեղը, գերեզմանում մնացած
մարմինը կամ նրա նշխարները: Իսկ դա անհնա-
րին եր, վորովհետև, ինչպես հետո կտեսնենք,
Մարիամ աստվածածինը բնավ գոյություն չի
ունեցել:

Յեվ ահա, քրիստոնեական քարոզիչները
հնարում են, վոր իբր թե Մարիամ աստվածա-
ծինն էլ մահանալիս՝ յերկինք է բարձրացել:
Բայց նրանք չեյին ասում, թե Մարիամը «համ-
բարձել» է, ինչպես ասում եյին Քրիստոսի վե-
րաբերմամբ, այլ ասում եյին՝ «վերափոխվել է»,
այսինքն աստված ու սրա վորդի Քրիստոսը փո-

խաղրել են նրան յերկրից իբր թե դեպի յերկինք,
իրենց մոտ:

Բայց պատմական գիտությունները, ժողովրդական զանազան հավատալիքների ու կրոնների ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր քրիստոնեական քարոզիչների ստեղծած պատմությունները Մարիամ աստվածածնի ու Քրիստոսի մասին արդեն գոյություն եյին ունեցել քրիստոնեությունից հազարավոր տարիներ առաջ հեթանոսական կրոնների մեջ, և այդ պատմություններն արվել են զանազան յերկրների հեթանոսական աստվածների ու աստվածածիկների մասին: Գիտական ուսումնասիրությունները նմանապես ցույց են տալիս, թե ինչպես են ծագել ու զարգացել այդպիսի հավատալիքներ զանազան ժողովուրդների մեջ և ինչպես է գոյացել աստվածածնի գաղափարը:

Մեր ժամանակակից գիտությունն ապացուցում է, վոր Քրիստոսն իսկապես գոյություն չի ունեցել, վոր նա առասպելական անձն է և խիստ նմանեցրած է հին հեթանոսական, այսպես կոչված «արև-աստվածներին»: Յեթե Քրիստոսը յերբեք գոյություն չի ունեցել և առասպելական անձնավորություն է յեղել, ապա ուրեմն յեզրակացնելու յենք, վոր առասպելական մարդու մայր համարվող Մաթիամն էլ առասպելական անձն է և իսկի գոյություն չի ունեցել:

III.

ՆԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԾԻՆՆԵՐ.

Քրիստոնեությունից շատ ու շատ դարեր ատաջ հեթանոսական կրոններն ունեյին իրենց աստվածները, վորոնք Քրիստոսի նման չարչարովել, մահացել և ապա հարություն են առել. նրանց մասին հեթանոսներն ունեյին նույն տեսակ հավատալիքներ ու պատմություններ, ինչ վոր քրիստոնյաները: Ահա այդ հեթանոսական կրոններն ունեյին կին աստվածներ, վորոնք կոչվում էյին աստվածամայրեր կամ աստվածածիններ: Սրանցից էյին ծնվել այդ հարություն առնող աստվածները:

Հին հեթանոսներն այդ աստվածուհիներին խիստ մեծ պատիվներ էյին տալիս. նրանց տոնը կատարում էյին մեծ հանդեսներով: Նրանք այդ աստվածուհիներին համարում էյին մայրության, պողաբերության ու ծննդաբերության աստված: Պարզ ե, վոր այդպիսի աստվածուհիներին ամենից շատ պետք ե պաշտելին ու յերկրպագելին հեթանոս կանայք, վորոնք նրանց համարում էյին կանանց միակ պաշտպանը:

Քրիստոնյաները պատմում են, թե Մարիամ աստվածածինը անարատ, անբիծ հղությամբ ե ծնել Հիսուսին, նա կույս ե մնացել և հղացել ե վնչ թե մահկանացուից՝ իր ամուսին Հովսեփից, այլ «սուրբ հոգուց»:

Այդպիսի հավատալիք ունեյին և այդպիսի պատմություններ եյին անում նաև հեթանոս հին ժողովուրդներն իրենց աստվածուհիների մասին:

Հին հեթանոսական կրոններում տիրող ավանդությունների համաձայն՝ աստվածներն իջնում են յերկնքից և յերկրի վրա սեռական հարաբերություն են ունենում այն կանանց հետ, վորոնց միջոցով ցանկանում են մարմնա-նալ մարդկային կերպարանքով: Այդ նպատակով աստվածները զուգավորվում են կանանց հետ յերազում կամ վորպես «սուրբ հոգի», ընդունելով աղափուլ, արեգակի և լուսնի ճառագայթների կերպարանք, կամ այդ աստվածներն ընդունում եյին յեզան, փղի, ոձի և այլ կենդանիների կերպարանք:

Այդ բոլոր դեպքերում կանայք իբր թե մնում եյին «անբիծ, անարատ կույս»: Այդ կանանցը համարելով աստվածամայր, սրբազնացնում ու յերկրպագում եյին միլիոնավոր մարդիկ, վորոնք հավատում եյին հոգևորականների ստեղծած առասպելներին:

Հիշենք միքանի ընտրող որինակներ, վորպեսզի համոզվենք, վոր «կույս Մարիամի» անարատ հղության պատմությունը գրեթե նույնն է, ինչ վոր յեղել է նախաքրիստոնեական հավատալիքներում:

IV.
ԱՆԱՐՍ ՇՂՈՒՅՈՒՆ.

Յեզիպոսում, մոտ չորս հազար տարի
մեզնից առաջ, Մետիմվի անունով քրմուհին,
կույս լինելով, հղանում է Ամմոն աստծուց և
ծնում է փարաոն Ամենոֆիս III-ին: Այս փա-



նկ. 1. Յեզիպոսական աստվածածին
Իզիդան և իր վորդի Հորուսը:
րաոնն իր ծննդյան պատմութիւնը 4 նկարնե-
րով արձանագրել է Հուքսոր քաղաքի տաճարի
պատին քանդակներով, վորոնք այժմ գտնվել են
պեղված ավերակների մեջ:

Նույն Յեզիպատոսում կար Հորուս աստծու ծննդյան պատմութիւնը: Հորուսի մայրը, Իզիդա աստվածուհին, կույս լինելով, հղանում է Ոզիրիս աստծուց: Իզիդայի տաճարում կար մի արձանագրութիւն այդ առթիվ. «Յես, Իզիդան, Հորուս աստծու մայրն եմ, և վոչվոք չի բարձրացրել իմ զգեստիս փեշերը»:

Յեզիպատոսում վերջերս կատարված հնագիտական պեղումների ժամանակ գտնվել են փոքր արձանիկներ ու քանդակներ, վորոնք պատկերացնում են աստվածամայր Իզիդային փոքրիկ Հորուսը գիրկն առած և ծիծ տալիս: Այդ արձանիկները մեծ թվով տարածվելիս են յեղել Յեզիպատոսից դուրս ամբողջ Միջերկրական ծովի յեղերքով: (Տես նկար № 1):

Յեզիպատոսից անցնենք Միջագետք՝ Ասորա-Բաբելաստան: Այստեղ հայտնի Սարգոն թագավորն իբր թե ծնվել է անարատ հղութիւնից: Հին դարից պահպանված մի արձանագրութիւն է գտնվել, վորտեղ Սարգոն թագավորն իր մասին ասում է. «Յես, Սարգոնը, Ազաթայի հզոր թագավորն եմ. մայրս ինձ հղացել է առանց հորս ոգնութեան»: Ասորա-բաբելական աստված Թամմուզը, վոր համարվում էր փրկիչ, նույն ձևով է ծնվել: Սրա մայրը, Իշտար աստվածուհին, հղանում է մարտի 25-ին (այսինքն քրիս-

տոնեական յեկեղեցու կողմից ընդունված «ավետման» տոնի օրը), յերբ ավետարեր հրեշտակը նրան հայտնում է, վոր ծնելու յե վորդի, հղանալով ասածուց, և կույս աստվածուհին անարատ հղությամբ ծնում է Թամուզին:

Ասորա-Բարելաստանին հարեան հին Պարսկաստանում նույնպես կար իրենց աստվածածինը,



Նկ. 2. Ավետումն հրեշտակն ասում է, վոր կծնի Հիսուսին:

վոր անարատ հղությամբ ծնել էր Միհր (Միթրա) աստված-փրկչին:

Փոքր-Ասիայում՝ փոյսւղիական ժողովրդի

մեջ պաշտվում եր Նանա աստվածածինը, վոր կույս մնալով, անարատ հղությամբ ծնել եր Ատաիս փրկչին:

Նման առասպելներով մանավանդ հարուստ եր հին հունական աշխարհը, սկսած Միջերկրական ծովի փոքր-ասիական ափերից մինչև Հունաստանի թերակղզին: Յերեք հունական աստվածուհիները՝ Հերա, Դեմետրա, Աթենաս, Արտեմիս (սրանց համապատասխանում էյին հին հռոմեական Յունոնա, Միներվա ու Գիանա) հայտնի էյին հին հունական կրոնի մեջ «Պարթենեա» մականունով, վոր նշանակում է «կուսական»: Նրանք կույս էյին կոչվում, չնայած վոր նրանք ծնել էյին միքանի «աստված վորդիներ»:


Հին Աթենքի, Կարթագենի, Կիպրոսի և այլ տեղերի հին ավերակների պեղումներից գտնվել են այդ յերեք աստվածուհիների քանդականկարները, վորոնք պատկերացնում են նրանց իբրև աստվածամայրեր, աստվածածիններ՝ յերեխան գրկում բռնած (տես նկ. №№ 3 և 4):

Դառնանք Հնդկաստանին, վորտեղ հեռավոր նախաքրիստոնեական ժամանակներից մնացած նույնանման առասպելներ կային: Այստեղ էլ կար կույս Մայան, վոր անարատ կերպով հղանում է յերագում և ծնում է Բուդդային:

Յեթե համեմատենք այդ նկարները, նաև հնդկական «յերկնային թագուհու» և սրա գոգում նստած յերեխայի պատկերը (տես նկ. № 5)



Նկ. 3. Դեմեարա:



Նկ. 4. Յունոնա:

Մարիամ աստվածածնի այն սովորական պատկերները հետ, վոր հանդիպում ենք քրիստոնեական յեկեղեցիներում (տես նկ. № 6), կտեսնենք, թե ինչ մեծ նմանութիուն կա նրանց միջև:

Մյուս կողմից ել՝ տեսնում ենք մի ուրիշ նմանութիուն. դա Արևելքի հեթանոսական մայր

աստվածածինների անուններն են—Մա, Մայա,
Մերի, Միրա, Միրիամ, Մարիամ...



Նկ. 5. Հնդկական աստվածածին

Վերոհիշյալ բոլոր առասպելներն արդեն պատ-
րաստի նյութեր եյին, վորից կարող եյին
ոգտվել ավետարան գրողներն ու քրիստոնեական
քարոզիչները: Ուրեմն քրիստոնեական կրոնն
ինքը վոչինչ նոր բան չի ստեղծել կամ պատմել
Մարիամ աստվածածնի ու սրանից «անարատ
հղությամբ» ծնված Քրիստոսի մասին, այլ յուրաց-
րել և և ոգտագործել այն առասպելական պատ-



Նկ. 6. Քրիստոնեական աստվածածինը Քրիստոսի հետ մութ յուններն ու տիրապետող հավատալիքները, վորոնք վաղուց ի վեր գոյութիւն ունեն հեթանոսական հին կրոններում:

V.

ՄԱՅՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՅՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ինչո՞վ բացատրել հեթանոսական աստվածների անարատ հղությամբ ծնվելու մասին այդ

առասպելներին նմանությունը զանազան հին ժողովուրդների մեջ. ինչո՞ւ այդ աստվածների մայրերն անարատ կույսեր են ճանաչվել: Բավական չէ ասել կամ պնդել, թե հին հեթանոսները հնարելու էին իրենց աստվածների ու նշանավոր թագավորների մասին հղություն ու ծննդյան առանձին տեսակի ձևեր, վորոնք, իհարկե, միանգամայն տարբերվելու էին հասարակ մահկանացուների ծննդյան ձևերից:

Վերը դրած հարցերին կարելի չե պատասխանել, յերբ ծանոթանանք ամուսնության և ընտանիքի զարգացման պատմությանը:

Հնադարյան նախնական ժամանակները գոյություն չունեն աշխարհի գոլգամային ընտանիքը և ամուսնության ձևը: Նախնական ժամանակաշրջանի մարդիկ, ինչպես հիմիկվա միջանի վայրենի ցեղեր, իրենց ապրուստի գլխավոր միջոցն ունենալով վորսորդություն, ձկնորսություն, գետնից արմարիք ու վորդեր հավաքելը, ապրում էին խրմբերով: Այդ խմբերի միջև տղամարդիկ ու կանայք միմյանց հետ ազատ սեռական հարաբերություն էին ունենում: Վոչվոք այդտեղ չեր կարող ասել, թե սա իմ կինս է, կամ սա իմ մայրս է: Այսպեսի պայմաններում, իհարկե, կուսության մասին խոսք չի կարող լինել. կնոջ կուսությանը վոչ մի նշանակություն կամ արժեք չէին տալիս:

Յերբ այս տեսակ սեռական հարաբերու-
թյունների, խմբակցական ամուսնությունների
մեջ յերեխա յեր ծնվում, անշուշտ, վոչվոր
չգիտեր, թե սւմնից և այդ յերեխան, սվ և նրա
հայրը: Այն ժամանակվա մարդիկ նույնիսկ չգի-
տեային, թե ինչպես և կատարվում հղությունը,
ինչից և առաջանում պտուղը, և չէին հասկա-
նում ծննդաբերության բնական պատճառները:
Նրանք կարծում էին, վոր կինը կարող և հղա-
նալ կենդանիներից, գազաններից, վորոնց միսը
կերել և կարող և հղանալ ծառերից, քարերից
և այլ առարկաներից, վորոնց մեջ ապրում են
վոզինները:

Յերեխայի ծնողը, կերակրողը, պահողը
մայրն էր. ուրեմն զավակներն ևլ միմիայն իրենց
մորն էյին ճանաչում, իրենց մոր իշխանությունն
էյին բնդունում: Ուստի ազգակցությունն ու ժա-
ռանդությունը միմիայն մորական գծով էյին
ճանաչում: Ընտանիքի զարգացման այս շրջանը
գիտության մեջ հայտնի յե մայրիբխանություն
(մատրիարխատ) անունով:

Յերբ նախնական մարդկանց անասական
գործունեյությունը հետզհետե գարգացավ և վոր-
սորդական ձևերից անցավ անասնապանությանն
ու յերկրագործությանը, սկսեց փոխվել նաև
ամուսնական ու ընտանեկան հարաբերություն-

20100 A I 4507

45201000400
 9.10.1908 № 2
 69283171Ա

ների ձեռք: Այդ նոր տնտեսական պայմաններում, առաջիկա նախնական կոմունիզմի փոխարեն, առաջացավ անպատական, անմասկան սեփականութունն ու նրա դադարափարը: Առաջացավ նաև անհատական ընտանիք, զուգավոր ամուսնական կյանք՝ նախկին խմբակցական ամուսնութունների փոխարեն:

Մական նոր զուգավոր ընտանիքը միանգամից չխորտակեց ու չվերացրեց նախկին սովորութուններն ու հասկացողութունները կնոջ ու ամուսնության մասին: Այս նոր շրջանում, իհարկե, կարող եր շատ անգամ պատահել, վոր աղջիկները նախքան ամուսնանալն ու մեկի հետ մշտապես կապվելը զավակներ ծնած լինեյին: Այդ հանգամանքը պախարակելի ու անպատվաբեր չեր համարվում. այդ աղջիկն ամուսնանալիս շարունակում եր կույս, որիորդ համարվել:

Բայց հետագայում, յերբ մասնավոր սեփականության դադարափարն ամբողջով ու տիրապետող դարձավ, տղամարդիկ սկսեցին կանանց վրա նայել իբրև իրենց անհատական սեփականության: Ամուսնանալիս նրանք արդեն պահանջում եյին, վոր ապագա կինը անպայման կույս լիներ, «անարատ» պահպանված լիներ, ուրիշին պատկանած չլիներ: Այդպես եր մտածում տղա-

մարդը, վորովհետև ծնվածներին նա համարում էր իր սեփական և վոչ թե կնոջ զավակներ:

Փողովուրդների մեջ սկսեց տիրել այն համոզմունքը, վոր յերեխան ծնվում է վոչ թե մորից, այլ հորից, այր մարդու սերմից: Մայրը միայն պահում և աճեցնում է իր արգանդում ստացած պտուղը:

Ազգակցությունն ու ժառանգությունն այսպիսի պայմաններում ճանաչվում էր միայն հորական գծով և վոչ թե մորական, ինչպես նախընթաց հնագույն ժամանակները: Ընտանիքի զարգացման այս շրջանը հայտնի յե հայրիօխա-նություն (պատրիարխատ) անունով:

Յերկար ու ձիգ տարիների ընթացքում ընտանեկան ու ամուսնական նոր ձևը (հայրիշխանական) ամրացավ ու միակ տիրապետող ձևը դարձավ: Կանացի՝ մորական գծով ազգակցության մասին, ինչպես և նախնական խմբակցական խառնակ ամուսնության ձևերի մասին բոլորովին մոռացվեց և մարդկային հիշողությունից միանգամայն վերացավ:

Ահա անհատական զուգավոր ընտանիքի տիրապետության շրջանում միայն կարող էր ստեղծվել ու կազմակերպվել «սնարատ» հողության առասպելը: Սերնդե-սերունդ ավանդաբար պահպանվում էյին զանազան պատմություններ ու

առասպելներ, վորոնք ծագել էին մայրիշխանա-
կան շրջանում: Այդ պատմութիւնների մեջ հիշ-
վում էին շատ անգամ կույս աղջիկներ, այ-
սինքն չամուսնացածներ, վորոնք յերեխա էին
ծնել: Անշուշտ պատմողի ու լսողի մեջ հարց
եր բարձրանալու, թե ով էր այդ յերեխայի
հայրը: Յեթե չէին հիշատակվում այս կամ այն
տղամարդը, վորպես յերեխայի հայրը, ուրեմն
յեզրակացնում էին, վոր այդտեղ գերբնական,
աստվածային գորութիւնն է յեղել: Այդ աստ-
վածային գորութիւնն է հղիացրել կնոջ և ծը-
նունդ տվել այդ յերեխային՝ այդպես էր մտա-
ծում հայրիշխանական շրջանի տղամարդը:

Այսպես էին ծագում և զարգանում բազ-
մաթիւ ավանդութիւններ ու առասպելներ գա-
նազան ժողովուրդների մեջ՝ «անարատ հղու-
թյան», ասածուց ծնվելու մասին:

VI

«ՄԵԾ ՄԱՅՐԸ».

Հեթանոսական մեծ կրօնները գոյացել ու
զարգացել են Առաջավոր ու Փոքր Ասիայում, այն
կենտրոններում, վորտեղ ժողովուրդների արե-
ախական գործունէութեան հիմքը կազմում էին
յերկրագործութիւնն և խաշնարածութիւնը:

Դեռևս նախապատմական հնագույն դարե-

րում հին Յեգիպտոսը, Միջագետքը, հին Հայաստանի դաշտերը, շնորհիվ մեծ գետերի, հայտնի յեն վորպես հին աշխարհի հացահատիկների շտեմարաններ: Նմանապես փոքր Ասիայի և հին Հայաստանի լեռնային բարձունքներն ու հովիտներն իրենց դալար և ճոխ կանաչներով՝ անասունների համար հարուստ և չափ արոտատեղիներ եյին:

Այդ յերկրների գերազանցապես յերկրագործ ժողովուրդների անտեսական ամբողջ գործունեյությունը, թափած աշխատանքի հետևանքները կտխված եյին շրջապատող բնությունից: Այդտեղ մարդը, դեռևս չունենալով կատարելագործված արտադրողական միջոցներ, յերկրագործական մշակված գիտելիքներ, գերի յեր գառնում շրջապատող բնական յերևույթներին և ուժերին: Ամեն տարի գետերի պարբերաբար կատարվող վարարումները, կանոնավոր անձրևները, արևի անհրաժեշտ ջերմությունը՝ այն միակ բնական ուժերն եյին, վորոնց վրա յեր դնում իր հուսները նախնի յերկրագործն ու խաշնարածը: Իսկ կարկուտը, հանկարծակի հեղեղն ու մրրիկը, յերաշան ու չորը՝ այն սոսկալի բնական պատուհասներն եյին, վորոնց դեմ այդ յերկրագործը վոչ մի պաշտպանողական միջոց չեր կարողանում հակադրել և անգոր, հուսահատ տեսնում եր իր աշխատանքի վոչնչանալը:

Ձիմանալով այդ բնական յերևույթների դեմ կռվելու միջոցները, չկարողանալով ծառայեցնել ու հպատակեցնել բնության ուժերը նպատակահարմար կերպով իր աշխատանքային գործողություններին, նախնական յերկրագործն ու խաշնարածը կարծում եր, թե այդ բոլոր բնական յերևույթներն ինչ-վոր խորհրդավոր, անտեսանելի ուժեր են, գերբնական վոզիներ, վորոնք գոյություն ունեն յերկնքում կամ յերկրի խորքերում:

Յերկրագործը հավատում եր, թե այդ աներևույթ, խորհրդավոր ուժերի բարի կամքից երդիսում իր աշխատանքի հաջողությունը, բերքի առատությունն, և ընդհակառակն, այդ ուժերի չար կամքի, բարկության, թշնամության հետեւանքով են փչանում իր աշխատանքի ստուգները, վոչնչանում բերքը:

Հնադարյան այդ յերկրագործն ու խաշնարածն ան ու դողով եր վերաբերվում դեպի այդ խորհրդավոր, աներևույթ ուժերը: Նա իրեն ըզգում եր ամբողջովին յենթարկված այդ «գորավոր» վոզիներին: Ուստի նա միշտ հայցում եր նրանց բարի կամքը հանդիսավոր պաշտամունքներով, աղոթքներով, կախարդական միջոցներով, մատաղներով և չեղոքացնում կամ հեռացնում եր իրենից այդ վոզիների չարությունն ու թշնամությունը:

Այսպիսով, յերկրագործ ժողովուրդների հավատալիքների մեջ հետզհետե զարգանում եյին կրօնական պաշտամունքներ, վորտեղ այդ բնական ուժերն ու յերևույթները դառնում եյին աստվածություններ, վորոնք պատկերացվում եյին մարդկային կերպարանքով:

Այդ յերկրագործական կրօնների մեջ սկզբներում ամենազլխավոր աստվածը պատկերացված ե յեղել կնոջ կերպարանքով: Այդ աստվածունին Փոքր ու Առաջավոր Ասիայում յերկրագործ ժողովուրդների մեջ ամենուրեք կոչվում եր «Մեծ Մայր» անունով և համարվում եր յերկրագործության, պտղաբերության, ծննդաբերության, մայրության մեծ աստվածուհի:

Ինչո՞ւ եյին այդ նախնական յերկրագործները զլխավոր աստվածուհուն համարում կանացի սեռի:

Մենք վերն առիթ ունեցանք բացատրելու, վոր հասարակական կազմակերպության սկզբնական ձևերից մեկն եր մայրիշխանությունը:

Այդ նախապատմական ժամանակաշրջանում մարդկային խմբակցությունների տնտեսական գործունեյության մեջ ել գոյություն ուներ, ինչպես և այժմ, աշխատանքի բաժանումն: Սակայն այդ ժամանակվա աշխատանքային բաժանումը բացառապես ըստ սեռի յեր: Կինմարդն

զբաղվում եր բուսական անուղ վորոնելով ու հավաքելով, իսկ տղամարդը միայն վորսորդություն և ձկնորսություն եր անում:

Կինմարդու վրա յեր ծանրացած վայրի բույսեր և արմտիք գտնելու հոգսը, վոր նա անում եր մարդկային այն ժամանակվա թափառական կյանքում փայտե բրիչը ձեռքին գետինը փոփրելով: Այդ աշխատանքը նրան հնարավորություն եր տալիս յերբեմն փոքրիկ պաշար ունենալ միշտ իր ձեռքի տակ և պահել այդ թաղելով գետնի մեջ կամ թփերի տակ: Այդպիսի աշխատանքի շնորհիվ կինը առաջինն յեղավ, վոր կարողացավ հասկանալ, թե ինչպես են աճում բույսերը և թե ինչպես կարելի յե սերմ պցելով կամ արմատապտուղը տնկելով հողի մեջ ստանալ բուսական արտադրություններ՝ իրենց կյանքի այդ գլխավոր ուտելիքը:

Այդպիսով սկիզբ ե առնում նախնական հողագործությունը, վոր կատարվում ե բացառապես փայտե բրիչով: Կինմարդն զբաղված լինելով միմիայն հողագործական տնտեսութեամբ, հետզհետե կատարելագործում եր այդ և անցնում նրա հասարակ ձևերից դեպի ավելի բարդ և դժվարին ձևերը, նա յեր ցանում, քաղհան անում և թշնամիներից պահպանում իր փոքրիկ արտը կամ բանջարանոցը: Այսպիսով նախնա-

կան յերկրագործութեան ամբողջ զարգացումը կին մարդու թափած աշխատանքի ու տնտեսական հողատարութեան հետեանքն ե յեղել:

Քանի վոր կենսական հնարավորութեաններ կային, և վայրի կենդանիներն ել դեռ շատ եյին, տղամարդը շարունակում եր իր վորսորդական արհեստը և հեռու յեր մնում հողագործութեանը: Հետագայում արդեն թափառական կյանքն ու վորսորդութեան միջոցով ուտելիք ճարելը շատ դժվարացավ: Իսկ միևնույն ժամանակ հողագործական մշակման ձևերը, կանանց շնորհիվ, զարգանալով ավելի ձեռնտու և ոգտավետ եյին դառնում սնունդ ստանալու գործում: Այն ժամանակ տղամարդն ել սկսում ե ոգնել կինմարդուն, մասնակցել հետգհետե նրա աշխատանքներին:

Իսկ յերբ արդեն հաստատվում ե նստակյաց կյանքը և վորսորդութեանը կորցնում իր առաջվա տնտեսական նշանակութեանը, տղամարդն ամբողջովին անցնում ե անասնապահութեանն ու հողագործութեանը: Տղամարդ յերկրագործն այնուհետև միմիայն իր վրա յե վերցնում հողագործական ամբողջ աշխատանքն, ու այսպիսով վերանում ե աշխատանքի բաժանման սեռական ձևը:

Այսպես, ուրեմն, կինն եր յեղել առաջին հո-

դագործը, վոր ամբացրել եր իր տնտեսական գերն այն ժամանակվա հասարակական-խմբակցական կյանքում ե ճանաչել սովել իր սոցիալական գերակշռող դիրքը իբրև միակ ծնող, իբրև մայր աճող սերունդների, իբրև առաջին յերկրագործ աշխատավոր:

Յեկ քանի վոր ժողովրդական հավատալիքներն ու կրոնական պաշտամունքները գոյանում են տնտեսական պայմաններում, ապա ուրեմն այդ հավատալիքներն ու պաշտամունքները շիշատանում են իրենց շրջապատի սոցիալ-հասարակական կազմին համապատասխան ձևեր: Այսպիսով, մայրիշխանական շրջանում հավատալիքների ու կրոնական պաշտամունքների կենտրոնը դառնում ե կինը, աստվածությունն անձնավորվում ե վորպես կին, մայր, ստանում ե կնոջ կերպարանք:

VIII.

ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՈՒՇԻՆԵՐ.

«Մեծ Մայր» աստվածուհու գաղափարը հետագայում ամբողջ Ասիայի յերկրագործ ժողովուրդների մեջ, յերբ սրանք բաժանվում են ազգային-պետական կազմակերպությունների, ստանում ե տեղական նշանակություն: «Մեծ Մայրն»

արդեն դառնում ե այս կամ այն ժողովրդի պետութեան մայր աստվածութիւններ տեղական սուանձին անունով:

Յեւ մենք տեսնում ենք, վոր հին Արևելքի յերկրագործ զանազան ժողովուրդներն ունեն յուրաքանչյուրն իր սեփական «մայր աստվածը»: Այդ մայր աստվածները թեև առանձին անուններով են, բայց իրենց նշանակութեամբ միևնույն գաղափարն են ներկայացնում, ինչ վոր ուներ սկզբնական «Մեծ Մայրը»:

Այդպես եր Իշտարը, Իզիդան, Կիբելան, Հերան, Դիանան, Աթենասը, Մայան, Միրրան, հին հայկական Անահիտը և այլն և այլն: Սրանք բոլորն ել, ինչպես արդեն բացատրել ենք, յերկրագործութեան, պտղաբերութեան, ծննդաբերութեան, մայրութեան, իսկ հետագայում նաև սեռական սիրո աստվածուհիներ եյին:

Յերբ զարգացավ հայրիշխանութեան հասարակական կազմը, ապա արդեն գլխավոր աստվածութիւններն ստանում են սղամարդու կերպարանք, արական սեռի գաղափար: Այդ արական գլխավոր աստվածութիւնը՝ «հայր աստվածը», յերկրագործական կրոնական հավատալիքների համաձայն, բնակեցվում եր յերկնքում: Իսկ մայր աստվածութիւնն ել բնակեցվում եր յերկրի մեջ, և սրա աստվածութեան գաղափարը

կապվում եր հողի ու յերկրի արգասաբեր ուժերի հետ:

Այդ հողը, յերկիրը՝ կրօնական հավատալիքներով պատկերացվում եր իբրև մայր աստծու արգանդ, վոր հղանում ե հայր աստծուց, այսինքն յերկնքի արգասաբեր ուժերից:

Մայր աստվածն արգասավորվում ե, գարգացնում ե իբ մեջ պտուղը և ապա ծնում, լույս աշխարհ ե հանում այդ՝ լինի դա բուսական բերքը, լինի դա կենդանիների ծնունդը, լինի դա մարդկային սերունդը:

Այս ամենից հետո հասկանալի կլինի, թե ինչու նախնական յերկրագործ ժողովուրդների «Մեծ Մայր» աստվածուհու գաղափարից գոյացած զանազան «մայր աստվածների» կամ «աստվածածինների» պաշտամունքն այնպիսի մեծ տեղ եր գրավում հին հեթանոսական հավատալիքների մեջ և ահագին նշանակութուն ունեւր հին ժողովուրդների սնտեսական ու հասարակական կենցաղում:

Այդ մայր-աստվածները, չնայած վոր հեթանոսական հին կրօնների մեջ արդեն տեղ եյին բռնել «հայր աստվածները», այնուամենայնիվ չեյին կորցրել իրենց նախկին հմայքն ու ազդեցութունը: Նրանք շարունակում եյին պահպանել իրենց նշանակութունը վորպես ամու-

սին, կին այր աստվածների, վորպես մայր ծըն-
վող աստվածների, այսինքն հռչակվում եյին
«աստվածածիններ», վորոնք ծնում եյին «անա-
րատ կուսութեամբ և հղութեամբ»: Նրանք շա-
րունակում եյին մնալ նախկին յերկրագործական
աստվածութեաններ, վորոնցից եր կախված պըտ-
ղաբերութեան հաջողութեանը, բերքի առատու-
թեանը, հողագործի և խաշնարածի նյութական
հարստութեանը:

Թե ինչ ահագին ժողովրդականութեան եյին
վայելում այդ մայր-աստվածուհիները, դա բա-
ցահայտ և այն բազմաթիվ տոներից ու հանդի-
սավոր պաշտամունքներից, վոր կատարվում եյին
յերկրագործ ժողովուրդների մեջ պտուղները հա-
սունանալու և բերքը հավաքելու ամառային վեր-
ջին օրերին:

Որինակի համար հիշենք Անահիտ աստվա-
ծուհու պաշտամունքը, վոր այնքան տարածված
ու ժողովրդականացած եր հեթանոսական հին
Հայաստանում:

Անահիտը հին հայերի մեջ կոչվում եր «աստ-
վածամայր» և ամենադիւսավոր ազգային աստ-
վածութեանն եր: Նա համարվում եր անարատ
և կույս, վորին հայ ազգիկները զոհաբերում եյին
տաճարներում իրենց կուսութեանը: Նա պաշտ-
վում եր վորպես պողաբերութեան, ծննդաբերու-

թյան, բերքի առատության աստվածուհի: Նրա տոները կատարվում էր յերկրագործական աշխատանք-նների հետ և կատարվում էր, յերբ բերքն արդեն հասած էր լինում, այն է՝ հուլիսի վերջերին հացահատիկների հավաքումով և ոգոստոսի կեսերին պտուղների համներով: Դա հին հայոց հեթանոսական այն մեծ ու հանդիսավոր տոնական որերն էյին, վորոնք համապատասխանում են այժմյան քրիստոնեական հայոց Վարդավառին ու աստվածածնի տոնին: Անահիտի այդ տոները կատարվում էր փառահեղ շքով: Այդ տոնին զոհաբերում էյին Անահիտին վնչ միայն ա-նասուններ, այլ և կանաչներ, ծաղիկներ, պրտուղներ, վորպես պաղաբերության աստվածուհուն:

Նման մեծ հանդիսակատարումով էր տոնվում հին Բաբելոնում Իշտար աստվածամոր տո-ներ, սովորաբար ոգոստոսի վերջերին: Այդ տոները կատարվում էր ի հիշատակ Իշտար աստվածուհու վերափոխման: Այդ աստվածածնի մահը՝ «վերափոխումն», ըստ հեթանոս յերկրագործի հասկացողության, նշանակում էր, թե բնու-թյունը, սարով իր պտուղն ու բերքը, սկսում է մեռնել, սառչել ամառային սապից:

IX.

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԵՐԻ ՓՈՒԱՐԻՆՈՒՄՆ
ՄԱՐԻԱՍ ԱՍՏՎԱԾԱԾՆՈՎ.

Այս բոլոր մեր ասածներէց հետո, յերբ քննութեան ենք անում «աստվածածնի տոնը», այն յեղբակացութեան ենք գալիս, վոր քրիստոնեական Մարիամ աստվածածինը փոխարինել ե նախկին հեթանոսական աստվածամայրերին. քրիստոնեական «աստվածածնի տոնը» բունել ե նախկին հեթանոս յեղբագործի այն բերի տոնի տեղը, վոր կասարվում եր ի հիւսարակ պրոպագանդայան, ծննդաբերության աստվածուհիների:

Հիշա՛վի, այսոր ել մեր ժողովուրդը կատարում ե «աստվածածնի տոնը», պահպանելով իր նախկին հեթանոսական սովորութիւններն ու յերկրագործական հավատալիքները և միևնույն ժամանակ վոչ մի նշանակութիւնն չի տալիս այդ տոնի քրիստոնեական բովանդակութեանը, վոր ձևակերպել ե հայ յեկեղեցին:

Դեռ այսոր ել հայ յեկեղեցին, հետեւելով հին հեթանոսական կրոնի սովորութեան, որհնում ե խաղող ու այլ մրգեր, վորոնք հասնում են այդ ժամանակ: Այդ որը հայ յերկրագործն, ըստ նախնի հեթանոսական սովորութեան, զոհա-

բերում ե իր այգիների բերքից վորոշ մասը յեկեղեցուն, քանի վոր այլևս չկան հեթանոսական սաճարներ:

Այդ սրը մեր դյուղացին, ինչպես և նրա հնադարյան նախնիքները, ճանաչում ե վորպես հիշատակելի որ, յերբ արդեն դաշտի ու այգու աշխատանքները վերջացած են, հացահատիկներն ամբարված, մնում ե քաղել արդեն հասած մրրգերն ու բանջարեղենը: Այդ սոնը, բառիս բուն նշանակութեամբ, յերկրի արտադրած պտուղների, կանաչների, արմախիքի, մի խոսքով՝ բնութքյան սված բերքի հիւստակելի որն ե: Հնադարյան նախնական հավատալիքներով այդ հիշատակելի սրը կապված ե յեղել բնութքյան ուժերը պատկերացնող աստվածութեանների, գրլխավորապես աստվածամայրերի, յերկրագործական աստվածուհիների հետ:

Սակայն յեկել ե այնուհետև քրիստոնեական յեկեղեցին և ներս խուժել այդ հեթանոսական հայացքների ու հավատալիքների աշխարհը, վոր այնպես սերտ կապված եր և շարունակում եր կապված մնալ մինչև այսօր ել յերկրագործական կենցաղի հետ:

Արտաքուստ քանդելով հեթանոսական կրոնը և նրա տեղը բարձրացնելով նոր քրիստոնեական կրոնը, յեկեղեցին ստիպված յեղավ մի կողմից՝

յուրացնել հեթանոսական պաշտամունքներն ու ծեսերը, վորոնք անկարելի եր արմատախիլ անել նոր քրիստոնեացած հեթանոսական մասսաներից, և մյուս կողմից՝ հարմարեցնել իր հավատալիքներն ու տոները հեթանոսական նախկին սովորութիւններին: Հեթանոսները, փոխելով իրենց կրօնն և ընդունելով քրիստոնեութիւն, շարունակում եյին առաջվա պէս պահել ու պահպանել իրենց սիրելի աստվածամայրերի մասին յեղած հավատալիքները, բայց արդէն քրիստոնեութեան անվան տակ:

Վոչինչ չի փոխվել ըստ եյութեան: Փոխվել ե միայն մի բան: Հազարավոր տարիներ առաջ այդ տոները, վորտեղ հանդես եր դալիս ժողովուրդն իր յերկրագործական աշխատանքի պտուղներով, շահագործվում եյին հեթանոսական տաճարների և քրմերի միջոցով, իսկ այնուհետև շարունակում են շահագործվել արդէն քրիստոնեական յեկեղեցիների ու վանքերի ու սրանց սպասարկող կրօնավորների կողմից:

X.

ՄԵՐ ԲԵՐՔԻ ՏՈՆԸ.

Այսպէս ե փոխարինվել հնադարյան նախնական բերքի տոնը Մարիամ աստվածածնա տոնով, վոր սնտախապաշտ հայ գյուղացին այսօր կատարում ե՝ կույր հավատով նախապաշարված:

Մակայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխութիւնն ազատել ե գյուղացուն կալվածատերերի

ճնշումից, քոխավայի ու վաշխառուի լծից, տեր-տերների ու վարդապետաների ազդեցութիւնից: Միշտ խավարի ու ազիտութեան մեջ թաղված, կրոնին ու յեկեղեցուն գերի դարձած հին գյուղն այսօր բանվորութեան և կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ նոր գյուղի շինարարութիւնն է սնում, նոր աշխատավորական կյանք է ստեղծում, նոր անտեսական կենցաղի հիմքերն է դնում: Հիմա մեր գյուղը դեն է շարտում իրենից հին կենցաղի հետ կապված կրոնական հավատալիքներն ու յեկեղեցական տոները, վորոնք վնչ մի միտք չունեն, վնչ մի սգուտ չեն բերում գյուղացու անտեսութեանը, բացի վնասներէից:

Մեր գյուղացու հին անտեսական կենցաղի հետ կապված յեկեղեցական տոների փոխարեն, ինչպիսիք են Վարդավառը, աստվածածնա տոնը, լաւիկերացը, այսօր հեղափոխական բանվորութիւնն ու գյուղացիութիւնը հիմնել են իրենց իսկական «Բերքի տոնը»:

Բերքի տոնը, այդ ճշմարիտ գյուղացիական ու աշխատավորական հանդիսավոր ուրը, անաքանի տարի յե, կատարվում է մեր գյուղերում: Նա կամաց-կամաց ժողովրդականութիւն է ստանում, հետզհետե մեր գյուղացու անտեսական ու հասարակական կենցաղի անհրաժեշտ մասնիկն է դառնում:

Ինչ են իսկապէս հին հեթանոսների յերկրագործական կրոնից քրիստոնյաների վերցրած յեկեղեցական տոները, վոր կապ ունեն մեր

դյուղացու տնտեսական կենցաղի հետ, և ի՞նչ եմեր այժմյան վերաշինվող դյուղի և խորհրդային իշխանության հաստատած բերքի տոնը:

Կրոնական հավատալիքներով կուրացած յերկրագործը կարծում է, վոր իր տնտեսությունը կախված է աստվածուհիներից ու աստվածներից: Յերկրագործական աշխատանքների հաջողությունը, բերքի առատությունն ապահովելու համար՝ նա դիմում է ազոթքներով, մատաղներով և ուխտադնացություններով գոյություն չունեցող Քրիստոսին կամ Մարիամ աստվածածնին. սրանց համար ել քրիստոնեական յեկեղեցին այդ նպատակով սահմանել է հատուկ տոներ ու հանդեսներ:

Յերաշտի, կարկտի ու զանազան վնասատուների ժամանակ, յերբ ունչպարի աշխատանքը կորչելու յե ու բերքը վիշանալու յե, մեր դյուղացին դարձյալ դիմում է յեկեղեցուն և տերտերներին: Յեվ ահա տերտերները հավատացյալ դյուղացիների գլուխն անցած սարքում են յեկեղեցական թափօրներ, «ցասման ժամեր», համայնական մատաղներ ու պատարագներ: Նախապաշարված դյուղացիները զանազան սնտախապաշտական միջոցների յեն դիմում, «ջրորհներքից» պահած «որհնած ջուրը» կամ «տերնդեղի» մոխիրն են շաղ տալիս արտերին, տղամարդու շորերը հագած այրի կանանց ստիպում են վարել գետակի կամ առվի չորացած հունը, յերկաթե ակիշը դուրս են շարտում դեպի դաշտը և

այլ այսպիսի հազար ու մի հիմար միջոցներ են գործու գործում:

Այդ բոլորի վերջն այն է լինում, վոր գյուղացին, իհարկե, վոչ մի ոգուտ ու հաջողություն չի տեսնում: Ընդհակառակն, այդ ամենի հետևանքն են լինում զրկանքներ ու վնասներ:

Մի կողմից՝ նա գուր փողեր է ծախսում մատաղների, աջահամբույրների, ուխտագնացությունների վրա. փողեր, վորոնք այդ տոն որերին գնում են տերտերների ու սրբատեղերում բուն դրած գանազան ճրիակերների գրպանը: Ել չենք ասում, թե վո՞րքան փող է գուր տեղը ծախսվում կերուխումի, արբեցողության վրա, վոր շատ անգամ վերջանում է դրմփղումբոցով ու արյունով:

Մյուս կողմից ել՝ ամենամեծ վնասն այն է, վոր այդ յեկեղեցական տոներին հավատալն ու սրբերի ոգնության դիմելը՝ մեր գյուղացուն սովորեցնում են իրենց հույսերը գնել գոյություն չունեցող «գորավոր խաչերի ու սրբերի» վրա. գյուղացին սովորում է ձեռքերը ծալել ու բնության դեմ կռիվ չմղել, հյու-հնազանդ և կուրացած ստասել, թե ի՞նչ է, տերտերների ու աղոթքների միջոցով կարող է բերքի առատությունը բարձրացնել կամ այդ բերքը փրկել բնության արհավիրքներից:

Յերկար ու ձիգ դարեր շարունակ ապրել է այս հավատը մեր գյուղացու մեջ, քայքայել է նրա տնտեսությունը, հեռու յե պահել նրան յերկրագործությունը զարգացնելու և կատարե-

լագործելու նոր ձևերից, զրկել և նրան գիտության լուսից, վորոնք իսկապես կարող են բարձրացնել նրա տնտեսությունը, ազատել նրան աղքատության ու չարքաշուծյան ճանկերից ու մարդավայել կյանք տալ նրան:

Հարյուրավոր տարիներ մեր հավատացյալ գյուղացին տոնում և «աստվածածնա տոնը» և իր բերքի հաջողութունն սպասում և «գորավոր սրբերից»: Բայց այդ գյուղացին վոչ մի ոգուտ չտեսավ, վոչ մի ոգնություն չստացավ նրանցից և չի յել ստանա յերբեք, վորովհետև իսկի չկան նրա հավատացած սրբերը, գորավոր խաչերը: Այդ յեկեղեցական տոնակատարումները, ցասումները, մատաղները՝ բացարձակ խաբեբայություններ են, գյուղացուն շահագործելու միջոցներ են:

Ահա յերկրագործի այդ յեկեղեցական տոների, կույր հավատալիքների ու մոտիապաշտումների դեմ այսօր, խորհրդային իշխանության ու գիտակից բանվորների և չքավոր ու միջակ գյուղացիների ջանքերով, հակադրվում և բերքի տոնը, իսկական աշխատավոր գյուղացիական մի տոն:

Այդ տոնը մենք կատարում ենք ամեն տարի աշնանը, մոտավորապես հոկտեմբերի սկզբներին: Այդ այն ժամանակն է, յերբ գյուղացիական աշխատանքները վերջացած են լինում և հնարավորություն ենք ստանում մեջտեղ բերել մեր ամբողջ տարվա յերկրագործական աշխատանքի արդյունքները:

Բերքի տնը գյուղացու աշխատանքի քննութեան որն եւ նա այդ որը մարդամեջ եւ զուր" գալիս իր կատարած աշխատանքի պտուղներով՝ հանդես եւ բերում իր հաջողութեանները, իր ունեցած փորձառութեան ու սովորածի հետեանքները: Այդ որը պարզվում եւ, թե գյուղացիներից ով եւ աշխատել իր սնտեսութեանը լավացնելու, հետեւելով ազրոնոմ-գյուղատնտեսի կամ փորձված հարեանի խորհուրդներին եւ ցուցմունքներին. ով եւ բարեփոխել գյուղատնտեսական աշխատանքի ձևերը, գործադրելով կատարելագործված մեքենաներ, քիմիական պարարտանյութեր կամ դեղեր: Յեվ ընդհակառակն, այդ որը պիտի պարզվի, թե ով եւ շարունակում յետ մնալ իր սնտեսութեան մեջ, ձեռքերը ծալած նստել, հույսը դնելով սրբերի ու մատաղների, տերտերների ու յեկեղեցիների վրա:

Բերքի տնը գյուղացու հեղափոխական, կարմիր տոնն եւ: Այդ որը հին կարգերի եւ սովորութեանների դեմ կռվելու եւ նոր կյանքի վերաշինութեան հաղթանակն եւ: Այդ որն ամենքը պետք եւ տեսնեն, վոր մեր նոր գյուղացիական կյանքի հիմքերն են—նոր ձևի ցանքսը, կոլլեկտիվ սնտեսութեանները, նոր տեսակի մեքենաներն ու գործիքները, գյուղական կոոպերացիան, փոխադարձ ոգնութեան կոմիտեաները, գյուղի լուսավորութեանը (դպրոց, խրճիթ-ընթերցարան, կինո, ակումբ), ելեկտրականութեանը, քիմիան, մի խոսքով՝ գիտութեան, գիրք, լրագիր, փորձառութեան եւ հիմնավոր աշխատանք:

Բերքի սննիւն գյուղացիին կզգա ու կհամոզ-
վի, թե ինչ կնշանակի կովել բնության արհա-
վիրքնների, վնաս բերող յերևույթների դեմ, ոգ-
տազործել նստատակահարմար կերպով բնության
ուժերն իրեն սովորեցրած միջոցներով և վնչ թե
տերտերների խրատներով, թե այդ բնական ու-
ժերն ու յերևույթներն աստծու պատիժներն են
և այլ այսպիսի անմիտ բաներ:

Բերքի սննը մենք կատարում ենք վնչ թե
տերտերներով, պատարագով, կերուխումով և
արբեցողություններով, այլ այնպես, ինչպես դա
վայել է մեր սոցիալիստական շինարարությանը,
մեր նոր գյուղական կյանքի կառուցմանը:

Բերքի սննիւն բոլոր տեղերում դասախոսու-
թյուններ և զրույցներ են լինում, վորտեղ մաս-
նակցելու յեն գյուղատնտես-ագրոնոմները: Այդ
դասախոսություններին և զրույցներին կպարզ-
վին գյուղացու զարդն ու ցավիւրը, նրա պա-
հանջներն ու կարիքները: Յերբ այդ ամենը
պարզվի ու հայտնի լինի, մեր բանվորա-գյու-
ղացիական իշխանությունն ել կաշխատի այդ
պահանները վերացնել և կարիքները բավարարել:


Բերքի սննիւն բոլոր տեղերում կազմակերպ-
վում են ցուցահանդեսներ, վորտեղ գյուղացի-
ները ցուցադրում են իրենց անտեսություննե-
րի հաջող բերքերն ու թափած աշխատանքի
պտուղները: Այդ ցուցահանդեսում ամեն մի
գյուղացի կանանի, թե ո՛վ է իրենց լավ ուսնչ-
պարը և ո՛վ է վատը: Այդ ցուցահանդեսներում
լավ մշակած բերքի, լավ դտած սերմացուի, լավ

պահած անասունների քննությունն է: Այստեղ
որինակելի աշխատանք տարած գյուղացին ստա-
նում է մրցանակ, այսինքն իրեն արժանի ընծա՝
կամ փողով կամ գյուղատնտեսական գործիքներով:

Բերֆի սոնին ահա այդ ցուցահանդեսներն
ու դասախոսություններն են լինելու մեր այս
որվա աշխատավոր գյուղացու հավաքույլների
տեղը: Այստեղ բերքի տոնին ամբողջ գյուղերով
պետք է գնան մեր ռանչպարները, վոր սովո-
րեն, փորձվեն, լսեն խորհուրդներ և այդպիսով
պատրաստվեն ավելի մեծ յեռանդով ու վճռա-
կան հույսերով հաջորդ տարվա գյուղատնտեսա-
կան աշխատանքների համար:

Ոտք չկա, վոր բերքի տոնին աշխատավոր
գյուղացին պետք է ուրախություն ել անի, բա-
վականություն ստանա, տեսնելով իր հաջողու-
թյունները, գյուղական շինարարության առա-
ջադիմությունները: Բայց այդ զվարճություն-
ները վնչ թե անմիտ կերուխումով, արբեցողու-
թյուններով պետք է անեն, վոր բնավ վայել չի
գիտակից աշխատավորներին: Իրա համար կան
ավելի անփնաս ու ոգտակար զվարճություններ:
Բերքի տոնին ել լինում են յերգեր, պարեր,
յերաժշտություն, վորին մասնակցում են մեծ ու
փոքր, տրվում են ներկայացումներ, նվագահան-
դեսներ, կինոնկարներ, կատարվում են պիոներ-
ների ու կոմսոմոլների մարզանքներ ու խաղեր:

Ահա այս է մեր բերքի տոնը, և այսպես
պետք է կատարենք մեր գյուղացու սրտին մտտիկ
ու հարազատ մեր բերքի տոնը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039099